ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Էրիկ Մայիսի Գրիգորյանի՝ «Բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Համաշխարհային տնտեսության հարափոփոխ իրադարձությունները պայմանավորեցին գիտական հանրության անընդհատ աճող ուշադրությունը վարքագծային ֆինանսների նկատմամբ: Վերջինի գիտական ու գործնական ուսումնասիրությունները առավել կարևորվեցին հատկապես տվյալ բնագավառում մի շարք անվանի տնտեսագետների Նոբելյան մրցանակի նվաճումների ֆոնին: Շուկայական հարաբերությունների անընդհատ զարգացումը պայմանավորեցին բնակչության ֆինանսական վարքագծի խորքային ու համապարփակ ուսումնասիրման անհրաժեշտություն, ինչը խիստ ակներև դարձավ համաշխարհային տնտեսություններում ուղեկցվող անոմալիաներով ու շոկերով: ՀՀ-ն նույնպես անմասն չի մնում գլոբալ իրադարձություններից, իսկ վարքագծային ֆինանսների վերաբերյալ հայրենական հեղինակների սակավ ու մակերեսային աշխատանքները անհրաժեշտաբար պայմանավորում են թեմայի արդիականությունը: Բնակչության ֆինանսական վարքագծի ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում նպաստել գործազրկության մակարդակի կրճատման, աղքատության հաղթահարման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը՝ խթանելով բնակչության ներդրումային որոշումների ռացիոնալացումը: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի ու ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրները բավարար խորությամբ հետազոտված չեն՝ բազմակողմանի հետազոտություն իրականացնելու և վերջինի արդյունքները գնահատելու օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ինչպես գիտամեթոդական, այնպես էլ գործնական մակարդակներում: Վերջինը կնպաստի բնակչության ֆինանսական հոսքերի առավել արդյունավետ կառավարմանը, որն էլ իր

հերթին շղթայական ազդեցություն կունենա ՀՀ տնտեսության զարգացման վրա: Այսպիսով՝ վերը նշվածը հիմնավորում է թեմայի արդիականությունն ու հետազոտության իրականացման անհրաժեշտությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Հեղինակը հետազոտության նպատակ է սահմանել բացահայտել ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի, ներդրումային որոշումների կայացման և դրանց հետ առնչվող հիմնախնդիրները, դրանց վրա ազդող գործոնների միջև կապերի, օրինաչափությունների ու դրսևորումների գնահատման հիման վրա մշակել և առաջարկել ֆինանսական վարքագծի բարելավման ուղիների գիտականորեն հիմնավորված մոտեցումներ, որին հասնելու համար առաջադրել է մի շարք խնդիրներ.

- բացահայտել վարքագծային ֆինանսների էությունը, կապն ավանդական ֆինանսների հետ,
- հավաքագրել, մշակել և ամփոփել բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներ և այլ տվյալներ,
- վիճակագրական ցուցանիշների և մոդելների օգնությամբ գնահատել ավանդների ներդրման վարքագիծը որոշող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը,
- վիճակագրական ցուցանիշների և մոդելների օգնությամբ գնահատել վարկավորման վարքագիծը որոշող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը,
- գնահատել ֆինանսական վարքագիծը որոշող վարքագծային գործոնների ազդեցությունը,
- բացահայտել բնակչության ֆինանսական վարքագծին առնչվող առկա հիմնախնդիրները, հետազոտության հիման վրա մշակել ֆինանսական վարքագծի բարելավման ուղիների մոտեցումներ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 116 էջի վրա (առանց հավելվածի):

Ներածությունում ներկայացվել է ատենախոսության արդիականությունը, սահմանվել են նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության առարկան և օբյեկտը, ներկայացվել օգտագործված տեղեկատվության աղբյուրները, ստացված գիտական արդյունքներն ու դրանց գործնական կիրառությունը:

Ատենախոսության առաջին՝ «Վարքագծային ֆինանսների էությունն ու տեսամեթոդական հիմքերը» գլխում հեղինակը մեջբերել է վարքագծային ֆինանսների վերաբերյալ տարբեր հեղինակների սահմանումներ, իրականացրել և ներկայացրել է վարքագծային ֆինանսների և ավանդական ֆինանսների տեսությունների համեմատական վերլուծություն, այնուհետև՝ քննարկել ներդրումային որոշումների վրա ազդող վարքագծային գործոնները: Այս գլխում գիտական նորույթ չի ձևավորվել:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ռեզիդենտ տնային տնտեսությունների ավանդների ներդրման ու վարկավորման վարքագծի վերլուծությունը» գլխում հեղինակը ներկայացրել է ՀՀ բնակչության սպառողական, ավանդների ներդրման, վարկավորման վարքագծերը բնութագրող վիճակագրական ցուցանիշներ: Նույն գլխում գնահատվել են մի շարք սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը և ուղղությունը տնային տնտեսությունների ավանդների ներդրման և վարկավորման վարքագծերի վրա: Այս գլխում ատենախոսի կողմից ձևակերպված գիտական նորույթների առաջին և երկրորդ կետերն են ձևակերպված:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի բարելավման ուղիները» գլխում ներկայացվել և վերլուծվել են ՀՀ բնակչության շրջանում անցկացված հարցման արդյունքները, գնահատվել են բնակչության ֆինանսական վարքագիծը, ֆինանսական բավարարվածությունը, ֆինանսական սթրեսը, ֆինանսական գրագիտությունը: Ատենախոսության նույն գլխում հեղինակը մշակել և առաջադրել է ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի բարելավման ուղիներ: Երրորդ գլխում են ներկայացված ատենախոսությունում տեղ գտած երրորդ և չորրորդ գիտական նորույթները:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Ատենախոսությունում ընդգրկված տեսության վերլուծությունը կարող է օգտակար լինել ֆինանսների դասավանդման և վարքագծային ֆինանսների վերաբերյալ հետազոտությունների ժամանակ: Գործնական վերլուծության արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ տնային տնտեսություններին, ֆինանսական ինստիտուտներին, պետական տնտեսական քաղաքականություն մշակողներին:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Հեղինակն ատենախոսությունում ներկայացրել է արդյունքներ, որոնցից հետևյալները՝ որպես գիտական նորույթ.

- ավանդային ներդրումների վարքագծի վերլուծությամբ հստակեցվել և գնահատվել են ՀՀ տնային տնտեսությունների խնայողության վարքագծի և ավանդների վրա ազդող գործոնները, այդ թվում՝ միջին ամսական անվանական աշխատավարձ, սպառողական գների ինդեքս, պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվ, ԱՄՆ դոլարի փոխարժեք, շուկայական տոկոսադրույք, ցույց է տրվել դրանց միջև կապի ուղղությունն ու բնույթը,
- վարկավորման վարքագծի վերլուծությամբ հստակեցվել և գնահատվել են ՀՀ տնային տնտեսությունների վարկերի վրա ազդող վերը նշված գործոնները, ցույց է տրվել դրանց միջև կապի ուղղությունն ու բնույթը,
- գնահատվել են ՀՀ-ում ֆինանսական գրագիտության, ֆինանսական սթրեսի և ֆինանսական բավարարվածության ազդեցությունը ֆինանսական վարքագծի վրա, նշված գործոնների միջև կապի ուղղությունն ու բնույթը,
- հետազոտվել և հիմնավորվել են ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կապը սոցիալ-տնտեսական տարբեր հիմնախնդիրների հետ, բացահայտվել կապի բնույթը, մշակվել և առաջադրվել են մոտեցումներ, որոնք կարող են նպաստել ներդրումային և ֆինանսական

վարքագծի բարելավմանը սոցիալ-տնտեսական, գիտակրթական, ֆինանսական-ներդրումային ոլորտներում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից կարևորվել են հետևյալները.

1. աշխատանքում կատարվել է ՀՀ բնակչության ավանդների ներդրման վարքագծի բազմակողմանի վերլուծություն, սակայն այն առավել կարժևորվեր, եթե ատենախոսությունում ստացված արդյունքները սահմանափակ ներկայացված չլինեին և չհանգեին պարզ ճշմարտության՝ մասնավորապես միջին անվանական աշխատավարձի նվազումը հանգեցնում է ավանդների նվազմանը և այլն,
2. աշխատանքն ավելի կշահեր, եթե ատենախոսությունում ՀՀ բնակչության վարկավորման վարքագծի վրա սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցության վերլուծությանը համապատասխան՝ առավել մանրամասն ստացված արդյունքները ներկայացված լինեին եզրակացություն բաժնում՝ ներառելով առավելապես քանակական տվյալներ,
3. 3.3 «Բնակչության ներդրումային որոշումների և ֆինանսական վարքագծի բարելավման հեռանկարները ՀՀ-ում» ենթագլխում հեղինակն առավելապես ամփոփել է 2-րդ և 3-րդ գլուխներում ստացված արդյունքները, մինչդեռ աշխատանքը շատ ավելի կշահեր, եթե հեղինակը սույն ենթագլխում ներկայացներ հատկապես ֆինանսական վարքագծի բարելավման հեռանկարները ՀՀ-ում,
4. օգտագործված գրականության ցանկում հանդիպում ենք 50 և ավելի տարվա վաղեմության բազմաթիվ աղբյուրներ, մինչդեռ վարքագծային ֆինանսները նոր ուղղություն է, առավել շահեկան կլիներ ներկայացնել ավելի թարմ հետազոտությունների արդյունքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը ունի դրական արժանիքներ, կատարված է ինքնուրույն հետազոտություն, վերլուծական աշխատանք: Ատենախոսությունում ներկայացված են վարքագծային ֆինանսների տեսությունում տեղ գտած տարբեր հեղինակների սահմանումներ ու բնորոշումներ, տեսության զարգացման նախապատմությունը, թվային շարքերի հիման վրա կատարված է հաջող վերլուծություն, ինչն արժանի է գնահատանքի: Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների ձևավորման նկատմամբ գոյություն ունեցող պահանջներին:

Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Սեղմագրում ներկայացված 6 հոդվածները հրատարակված են ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականներում: Դրանք արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, նաև որպես գիտական նորույթ հեղինակի կողմից ներկայացված մոտեցումները:

Եզրակացնելով նշենք, որ **Էրիկ Մայիսի Գրիգորյանի՝ «Բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով** ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, և հեղինակն արժանի է **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր **Հ. Գ. Մնացականյան**

25 հունիսի 2022 թ.

Հ. Գ. Մնացականյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտական քարտուղար
բանասիրական գիտությունների թեկնածու **Մ. Վ. Հովհաննիսյան**